



Coalition

for an Independent and
Transparent Judiciary



Շինչո՞ւ է մեզ համար կարևոր դատարանը

Հասարակության մեջ համակեցության ընթացքում մարդիկ հաճախ բախուժներ են ունենում միմյանց կամ պետության հետ: Տարածայնությունների պատճառները կարող են լինել բազմաբնույթ՝

- մեզ ազատել են աշխատանքից,
- ծանրացել է մեր առողջական վիճակը, քանի որ բժիշկը ոչ պրոֆեսիոնալ է կամ անտարբերություն է ցուցաբերել,
- ցանկանում ենք ամուսնալուծվել, սակայն ամուսնու հետ համաձայնության չենք գալիս երեխայի հետ կապված իրավունքների և պարտականությունների շուրջ,
- ոստիկանությունը մեզ անհիմն տուգանել է,
- խորհրդարանն օրենք է ընդունել, որը սահմանափակում է սահմանադրությամբ պաշտպանված մեր իրավունքը մասնակցել ընտրություններին կամ բողոքել պետության ապօրինի գործողությունների դեմ և այլն:

Ժամանակակից հասարակության մեջ անհրաժեշտ է ունենալ նման տարածայնությունները խաղաղ ճանապարհով և օրենքի հիման վրա լուծելու հնարավորություն: Միևնույն ժամանակ, կարևոր է իմանալ, որ մարդիկ իրենց ընտանիքի անդամների կամ ընկերների իրավունքների ոտնահարման դեպքում, անձամբ չեն ցանկանա վերականգնել արդարությունը կամ վրեժխնդիր լինել:



Դատարանն այն վայրն է, որտեղ անկախ, անաչառ և խաղաղ կերպով պետք է լուծվեն մեզ հուզող խնդիրները, իսկ դատավորը՝ հատուկ կրթություն ստացած անձ, որը երդում է սվել պահպանել օրենքի գերակայությունը և բացատրել, թե ինչ է ասում օրենքը, խախտվել է այն, թե ոչ, և ինչպես է ենթարկվելու պատասխանատվության օրինախախտը:

Ի՞նչ է օրենքի գերակայությունը և ինչպե՞ս է այն պաշտպանում դատարանը

Հաճախ ենք լսում, որ ժողովրդավարությունը հիմնված է օրենքի գերակայության սկզբունքի վրա: Եվրամիության թեկնածուի կարգավիճակը ևս էապես կախված է նրանից, թե կառուցում ենք այրողք օրենքի գերակայության վրա հիմնված պետություն:

Ի՞նչ է նշանակում օրենքի գերակայություն:

- **Օրենք.** իրականացման ենթակա պարտադիր կանոններ, որոնք կարգավորում են հարաբերությունները մեր միջև և պաշտպանում մեզ այլ անձի կամ պետության ապօրինի գործողություններից:
- **Օրենքի գերակայություն.** ընդհանուր կանոն, որի շուրջ համաձայնության ենք գալիս հասարակության բոլոր անդամներս: Յուրաքանչյուր ոք՝ անկախ իր ծագումից, ունեցվածքից, կարգավիճակից, հավասարապես սահմանափակվում է օրենքով և ոչ ոք չի կարող բարձր լինել օրենքից: Նախարարները, խորհրդարանականները, նախագահները, բանակի զենեարայները, բիզնես ընկերությունները և նույնիսկ դատավորները պետք է ենթարկվեն օրենքին այնպես, ինչպես մենք քաղաքացիներս:

Ինչպե՞ս է պաշտպանում դատարանը օրենքի գերակայությունը:

Ժողովրդավարական պետությունում իշխանությունը բաշխված է երեք ճյուղերի.

- օրենսդիր (խորհրդարան)՝ ստեղծում է օրենքը,
- գործադիր (կառավարություն)՝ գործարկում է օրենքն առօրյա կյանքում,
- դատական՝ պարզաբանում է օրենքը և կիրառում այն կոնկրետ վեճեր լուծելիս:

Երեք ճյուղերն էլ ունեն իրենց տարբեր լիազորություններն ու պարտականությունները: Միևնույն ժամանակ, դրանք վերահսկում են միմյանց, որպեսզի որևէ մեկը չչարաշահի իր լիազորությունները, և ի վերջո անարդարացիորեն չսահմանափակի մեր իրավունքները:

Այս գործընթացում առանձնահատուկ դեր ունի դատարանը.

- Դատարանը վահան է, որը պետք է պաշտպանի օրենքի գերակայությունը, սահմանադրությունը և վերջապես՝ մեր իրավունքներն ու ազատությունները խորհրդարանից, կառավարությունից, այլ դատավորներից և բոլոր նրանցից, ովքեր կարող են խախտել դրանք:
- Դատարանը պետք է ապահովի, որ օրենսդիր և գործադիր իշխանությունները չգերազանցեն սահմանադրությամբ և օրենքով սահմանված իրենց լիազորությունները:



Դատարանը ծառայում է մեր և մարդոջ հասարակության շահերի, մեր իրավունքների արդյունավետ պաշտպանությանը:

Կարևոր է նաև, որ մարդու իրավունքների պաշտպանության գործընթացում դատարանը վայելի հասարակության աջակցությունը: Այն պետք է պաշտպանված լինի, եթե որևէ անձ կամ պետական մարմին փորձի խափանել դատարանի գործունեությունը կամ սպառնալ նրա անկախությանը:

Ինչպիսի՞ն պետք է լինի մեր իրավունքները պաշտպանող դատարանը

Մեր իրավունքներն արդյունավետորեն պաշտպանելու համար ժողովրդավարական պետությունում դատարանը պետք է լինի անկախ, անաչառ, հաշվետու և թափանցիկ:

Անկախ դատարանն առաջին հերթին ծառայում է մեր՝ անհատներիս և հասարակության պաշտպանությանը: Միայն անկախ դատարանի պայմաններում կարելի է ակնկալել և վստահել, որ դատավորը արդարացիորեն կքննի մեր գործը: Անկախ դատարան նշանակում է դատավոր, որը գերծ է հարկադրանքներից և սպառնալիքներից՝ անկախ սպառնալիքի հեղինակից, լինի դա քաղաքական գործիչ, բարեկամ, հարևան, գործընկեր դատավոր, թե այլ որևէ մեկը:



Դատարանի անկախությունը կարևոր է՝ պաշտպանելու մեր իրավունքները և օրենքի գերակայության նկատմամբ հասարակության վստահությունը:

Անաչառ դատարան. դատավորը, ինչպես ցանկացած այլ անձ, ունի իր տեսակետները հասարակությանը հուզող խնդիրների վերաբերյալ, ինչպիսիք են՝ առողջապահությունը, ընտանեկան բռնությունը, աբուսը, անօթևանությունը և այլն: Մակայն՝ նա պարտավոր է որոշում կայացնել ոչ թե սեփական տեսակետների կամ հասարակության մեջ տարածված կարծիքի համաձայն, այլ միայն օրենքի ու ապացույցների հիման վրա:



Դատարանը պետք է ապահովի արդար դատավարություն և ոչ թե շահավետ արդյունք կողմերից որևէ մեկի համար:

Թափանցիկ դատարան. դատարանին վստահելու համար կարևոր է, որ արդարությունը հաստատվի հրապարակավ:



Դատարանը ոչ միայն պետք է կայացնի արդար որոշումներ, այլև մենք պետք է տեսնենք, որ այդ որոշումներն արդար են:

Դատավարությունը բացահայտ պետք է լինի բոլորի համար, բացառությամբ բացառիկ դեպքերի (օրինակ՝ դոմփակ նիստ անցկացնելով՝ դատավորը պաշտպանում է անչափահասի շահերը, տուժողի իրավունքները և այլն): Մենք պետք է ունենանք հնարավորություն տեղյակ լինելու, թե ինչ է կատարվում դատական նիստերի դահլիճում, ինչ գործ է քննվում, ովքեր են մասնակիցները և գանք եզրահանգման, թե որքանով ենք վստահում դատարանին:



Մենք՝ հասարակությունը, միայն այն դեպքում ենք վստահում և կատարում դատարանի որոշումները, երբ տեսնում ենք, որ դատարանը գործը կարգավորում է անկախ և անաչառ կերպով և չի դրսևորում կանխակալ վերաբերմունք:

Հաշվետու դատարան. Վրաստանում մենք՝ քաղաքացիներս ընտրում ենք խորհրդարանը, անուղղակիորեն մասնակցում կառավարության ստեղծմանը, թեև դատավորներ չենք ընտրում, ինչպես նաև չունենք նրանց ազատելու իրավունք:

Դատարանի անկախությունը չի ենթադրում, որ դատավորն իրավունք ունի գործել իր ցանկության համաձայն: Դատարանն ազատ է, թեև հաշվետու է կողմերի և հանրության առջև

- գործը լուծել անձամբ՝ օրենքի և ապացույցների հիման վրա,
- որոշումը հիմնավորել լիովին, համոզիչ կողմերի և հասարակության համար,
- իր գործողություններով և որոշումներով չվտանգել դատարանի նկատմամբ մեր վստահությունը:

Ինչպե՞ս ենք ապահովում դատարանի հաշվետու լինելու պարտականությունը:

- Դատարանի կողմից թույլ տրված սխալներն ուղղելու նպատակով բոլորի համար երաշխավորված է որոշումը բողոքարկելու իրավունքը:
- Դատական նիստերը բացահայտ են, որոշումները պետք է հասանելի լինեն հանրությանը, ինչը մեզ թույլ կտա գնահատել և քննադատել դատարանի գործունեությունը:
- Եթե դատավորը վարվում է էթիկայից դուրս կամ խախտում է օրենքը, մենք իրավունք ունենք պահանջելու դատավորի պատասխանատվությունը:



Հաշվետվությունն անհրաժեշտ է մեզ՝ հասարակությանը հավաստիացնելու համար, որ դատական համակարգի նկատմամբ ցուցաբերած մեր վստահությունն արդարացված է և վաստակած: Հաշվետու լինելու պարտականությունը պաշտպանում է մեզ՝ դատարանի կողմից իր լիազորությունները չարաշահելու հարցում:

Ինչպիսի՞ն պետք է լինի մեր իրավունքները պաշտպանող դատավորը



Ըստ Սոկրատեսի՝ «Դատավորը պետք է կատարի չորս դեր՝ քաղաքավարիորեն լսի, խելամտորեն պատասխանի, զգուշորեն դատի և արդարացիորեն որոշի»:

Եթե շարքային մարդու հարցնենք, թե ինչպիսի՞ն պետք է լինի դատավորը, կստանանք մոտավորապես այսպիսի պատասխան իրավասու, անաչառ, հանդուրժող, հարգանք ցուցաբերելու ունակությամբ օժտված, աշխատասեր, համարձակ, անկախ, ազնիվ, պարկեշտ:

Ի՞նչ ակնկալիքներ ունենք դատավորից նախքան գործը քննելը և որոշում կայացնելը: Ակնկալում ենք, որ

- նա բավարար գիտելիքներ ունի մեր կյանքը կարգավորող օրենքների մասին,
- կողմերի նկատմամբ նա քաղաքավարի և արդար է, ուշադիր կլսի նրանց և յուրաքանչյուրին կընձեռի սեփական կարծիքն արտահայտելու հնարավորություն,
- որոշումը կկայացնի ինքնուրույն, առանց ուրիշների միջամտության,
- կպաշտպանի դատարանի անկախությունը և նրա հեղինակությունը հանրության աչքում:

Դատավորը պետք է ընկալի, որ նա հասարակության սովորական անդամ չէ՝ ինչպես դատարանի դահլիճում, այնպես էլ առօրյա կյանքում նա ունի որոշ սահմանափակումներ վարքագծի և կարծիքի արտահայտման հարցում

- իրավունք չունի նախնական կարծիք հայտնել այն գործի վերաբերյալ, որը քննում է կամ հավանաբար պետք է քննի,
- իրավունք չունի քննելու այն վեճը, որտեղ կողմերից մեկն իր ընտանիքի անդամ է, բարեկամը, ընկերը կամ այլ նման անձ,
- կարևոր է, որ լինի քաղաքավարի և զուսպ՝ ինչպես դատարանի դահլիճում, այնպես էլ առօրյա կյանքում,
- մարդկանց հետ շփվելիս չօգտագործի վիրավորական արտահայտություններ և այլն:



Ժողովրդավարական պետությունում դատավորից պահանջվող հատկություններն ու վարքագիծը անհրաժեշտ են օրենքի գերակայության, մարդու իրավունքների և դատարանի նկատմամբ մեր վստահության պաշտպանության համար:

Կարևոր է նաև. մեր՝ հասարակության շահերից է բխում պաշտպանել դատարանը և դատավորներին քաղաքական իշխանության կամ անհատների անհիմն քննադատությունից ու նրանց գործունեությանը անօրինական միջամտությունից:



USAID ԵՅՅԵԿՕՄԻՆ ՉՅՅԵՍԵՄԻՆ ԶԳՐՅԵՅՅ
USAID RULE OF LAW PROGRAM

Գրքույկը պատրաստվել է կոալիցիայի կողմից: Դրա հրատարակումը հնարավոր է դարձել USAID Օրենքի գերակայության ծրագրի աջակցությամբ: Ծրագիրն իրականացվում է Արևելք-Արևմուտք կառավարման ինստիտուտի (EWTI) կողմից՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսական աջակցությամբ: Գրքույկում արտահայտված կարծիքները հեղինակային են և չեն կարող արտահայտել վերը նշված միջազգային կազմակերպությունների տեսակետները: